www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro

NLRP12 կապված կրկնվող տենդ

Տարբերակ 2016

3.ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների առօրյա կյանքի վրա:

Կյանքի որակի վրա կարող են ազդել տենդի կրկնվող դրվագները: Հաճախ զգալի ուշացումով է դրվում ճիշտ ախտորոշումը, որն առաջացնում է ծնողների անհանգստությունը և երբեմն կատարվում են ոչ անհրաժեշտ բժշկական միջամտություններ:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Խրոնիկ հիվանդություն ունեցող հիվանդների համար կարևոր է կրթության շարունակումը: Կան որոշակի գործոններ, որոնք կարող են խնդիրներ առաջացնել դպրոց հաճախելուն, ինչի համար կարևոր է բացատրել ուսուցիչներին երեխայի հնարավոր կարիքների մասին: Ծնողները և ուսուցիչները պետք է անեն իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի թույլ տան երեխային սովորական ընթացքով մասնակցել երեխային դպրոցական միջոցառումներին, ոչ միայն, որպեսզի երեխան լինի հաջողակ ուսման մեջ, այլ նաև որպեսզի ընդունվի և գնահատվի և՛ հասակակիցների, և՛ մեծահասակների կողմից: Ապագա ներգրավվածությունը պրոֆեսիոնալ կյանքում երիտասարդ հիվանդի համար կարևոր նշանակություն ունի, և խրոնիկ հիվանդություններով հիվանդների օգնության նպատակներից մեկն է:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Սպորտով զբաղվելը ցանկացած երեխայի ամենօրյա կյանքի

կարևոր մասն է: Բուժման նպատակներից մեկը երեխաներին թույլ տալն է ունենալ հնարավորինս նորմալ կյանք և որպեսզի իրենք իրենց չտարբերակեն հասակակիցներից: Երեխան կարող է զբաղվել իրեն ի զորու բոլոր տեսակի գործունեություններով: Սակայն, գրոհների ընթացքում անհրաժեշտ է սահմանափակել ֆիզիկական ակտիվությունը և հանգստանալ:

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:

Չկան խորհուրդներ յուրահատուկ սննդակարգի մասին: Ընդհանուր առմամբ, երեխաները պետք է ընդունեն իրենց տարիքին համապատասխան, բալանսավորված, նորմալ սնունդ: Աճող երեխային խորհուրդ է տրվում առողջ, բավարար քանակի սպիտակուց, կալցիում և վիտամիններ պարունակող, լավ բալանսավորված սնունդ: Կորտիկոստերոիդ ստացող հիվանդները պետք է խուսափեն գերսնվելուց, քանի որ այս դեղերը կարող են բարձրացնել ախորժակը:

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ցածր ջերմաստիճանը կարող է հիվանդության նշանները խթանել:

3.6 Երեխան կարո՞ղ է պատվաստվել:

Այո, երեխան կարող է և պետք է պատվաստվի: Սակայն բուժող բժիշկը նախօրոք պետք է տեղեկացվի կենդանի թուլացված պատվաստանյութերով պատվաստման մասին, քանի որ այն կարող է բուժման որոշ եղանակների հետ անհամատեղելի լինել:

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:

Ներկայումս այս հարցի մասին տեղեկատվություն գրականության մեջ չկա: Որպես ընդհանուր օրենք, ինչպես այլ աուտոբորբոքային հիվանդությունների դեպքում, ավելի լավ է հղիությունը պլանավորել, ինչը թույլ կտա նախօրոք հարմարեցնել բուժումը՝ հաշվի առնելով պտղի վրա կենսաբանական ագենտների հնարավոր կողմնակի ազդեցությունները: